

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

### ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԿՈՇԱԲԻՏԱՅԻՆ ԱՎԱՐՏՎԵՑ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿՊՈՐԾԻ»



Վրաստանի վարչապետ Բիժինա Իվանիշվիլին, գնահատելով կայացած նախագահական ընտրությունները, հայտարարեց, որ կոհաբիտացիան (գոյակցությունը, նկատի է առնվում նախագահի և խորհրդարանական մեծամասնության համատեղ գոյակցությունը) ավարտված է, և կառավարությունը պետության նորընտիր ղեկավարի հետ ավելի արդյունավետ կգործի:

Մեկնաբանելով Վրաստանի ԿԸԴ-ի հրապարակած տվյալները՝ ըստ որի, Վրաստանի նախագահական ընտրություններում հաղթանակ է տարել «Վրացական երազանք» իշխող կոալիցիայի թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին՝ ստանալով ձայների 62,11 տոկոսը: Երկրորդ տեղում «Միասնական ազգային շարժում» կուսակցության ներկայացուցիչ Դավիթ Բաքրաձեն է՝ 21,73 տոկոս ձայներով, երրորդում՝ «Ժողովրդավարական շարժում» Միասնական Վրաստան» կուսակցության առաջնորդ Նինո Բուրջանաձեն, որի օգտին քվեարկել է

ընտրողների 10,18 տոկոսը, Վրաստանի վարչապետ Բիժինա Իվանիշվիլին հայտարարեց. «Ես չեի սպասում, որ նրանք (Ազգային շարժումը) այդքան շատ ձայներ կստանան: Դա, գուցե, ինձ վրա ավելի մեծ տպավորություն գործեց, քան մեր հաղթանակը, որը մենք ակնկալում էինք, և որին ես վստահ էի: Ի վերջո, կոհաբիտացիան ավարտված է, և կառավարությունը նորընտիր նախագահի հետ ավելի արդյունավետ կգործի»,- հոկտեմբերի 30-ին կայացած կառավարության նիստում հայտարարեց Բիժինա Իվանիշվիլին:

## ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍՍԱՏԱՆ

### ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԿՈՂՄԻՑ ԿԼԻՆԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ»

Վրաստանը կառուցողական դիրք կբռնի Ռուսաստանի նկատմամբ և կշարունակի հարաբերությունների կարգավորման գործընթացը:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի նորընտիր նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: «Մեր կողմից ագրեսիա չի լինի, Վրաստանը կառուցողական դիրք կբռնի Ռուսաստանի նկատմամբ»,- ասել է Մարգվելաշվիլին:

Միեւնույն ժամանակ նա նշեց, որ Վրաստանը սկզբունքորեն կշարունակի Աբխազիայի և Չարավային Օսեթիայի անկախության չճանաչման քաղաքականությունը, ինչպես նաև մտադիր է կատարել արեւմտյան գործընկերների բոլոր այն խորհուրդները, որոնք վերաբերում են ՌԴ-ի հետ հարաբերություններին:



Իր հերթին, ՌԴ-ի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել էր, որ, «դատելով (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

### «ԱԲԽԱԶՆԵՐՆ ՈՒ ՕՍԵՐԸ ԻՐԵՆՔ ԿՑԱՆԿԱՆԱՆ ՎՐԱՑ ԶԱՍԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍ ԿԱԶՄԵԼ»

Վրաստանի իշխանությունները կստեղծեն այնպիսի հասարակություն, որ արխազներն ու օսերն իրենք կցանկանան դրա մաս կազմել:

Այդ մասին BBC-ի ռուսական ծառայությանը հայտարարել է Գիորգի Մարգվելաշվիլին, որը հաղթանակ է տարել վրացական պետության ղեկավարի՝ հոկտեմբերի 27-ին կայացած ընտրություններում:

«Այդ հարցերը, բնականաբար, լուծվում են միայն այն ձևաչափով, որտեղ ռուս դիվանագետները վրացի դիվանագետների ու մեր գործընկերների հետ միասին վերլուծում են ստեղծված խնդրահարույց իրադրությունը: Այդ հարցերը լուծվում են նաև այն բնակչության հետ երկխոսության ընթացքում, որը մնացել է Աբխազիայի և Ցխինվա-

լիի տարածաշրջանի տարածքում: Մենք կստեղծենք այնպիսի հասարակություն, որտեղ մեր արխազ և օս քաղաքացիները կցանկանան ապրել»,- նշել է Մարգվելաշվիլին:

Դրա հետ մեկտեղ, նա հայտարարել է, որ Վրաստանի իշխանությունները կշարունակեն Աբխազիայի և Չարավային Օսեթիայի անկախության չճանաչման քաղաքականությունը:

Վրաստանի իշխանությունները կստեղծեն այնպիսի հասարակություն, որտեղ մեր արխազ և օս քաղաքացիները կցանկանան ապրել»,- նշել է Մարգվելաշվիլին:

Դրա հետ մեկտեղ, նա հայտարարել է, որ Վրաստանի իշխանությունները կշարունակեն Աբխազիայի և Չարավային Օսեթիայի անկախության չճանաչման քաղաքականությունը:

### ՆՈՐ ՎԱՐՉԱԴԵՏՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԼԻՆԻ ԲՈԼՈՐԻ ՇԱՄԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՆՈՒՆԸ ԶԱՅՏՆԻ ԿԴԱՌՆԱ ԱՅՍՈՐ

Վրաստանի վարչապետ Բիժինա Իվանիշվիլին մտադիր է իր պաշտոնաթողության մասին պաշտոնապես հայտարարել նոյեմբերի 24-ին:

Այդ մասին վարչապետը հայտարարեց հոկտեմբերի 28-ին լրագրողների հետ կայացած հանդիպմանը: «Նոյեմբերի 24-ին ժողով ունեն մշանակված, որտեղ ես հրաժարական

կտամ, կհեռանամ կուսակցությունից ու քաղաքականությունից: Մինչ այդ, ես մնում եմ քաղաքականության մեջ և մտադիր եմ համաձայնեցնել վարչապետի թեկնածուին: Քանի դեռ ես քաղաքա-

կանության մեջ եմ, կարող եմ արձանագրել իմ քաղաքական կարծիքը: Դա այն չէ, որ ես հեռանամ, և հետո սկսեմ պարտադրել իմ կարծիքը»,-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐԻ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒՆ

Նախագահական ընտրություններին հաղթանակի կապակցությամբ Գիորգի Մարգվելաշվիլին շնորհավորական ուղերձներ են հղել Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը, Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը, Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևը, Լիտվայի նախագահ Դալիա Գրիբաուսկայտեն, Իսրայելի վարչապետ Բինյամին Նեթանյահուն, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայյիբ Էրդողանը, այլ երկրների բարձրաստիճան պաշտոնական անձինք:

### Տ.ՍԱՐԳՍՅԱՆ. «ԶԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՆՈՐ ԷՅ ԿԲԱՅԻ ՄԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Վրաստանի վարչապետ Բիժինա Իվանիշվիլին: Վրաստանում կայացած նախագահական ընտրություններում «Վրացական երազանք» ժողովրդավարական Վրաստան» կուսակցության թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլու հաղթանակի կապակցությամբ:

Հայաստանի վարչապետի ուղերձում, մասնավորապես, ասված է. «Վստահ եմ, որ այս հաղթանակը նշանակալից գործոն կհանդիսանա եղբայրական Վրաստանի հետագա զարգացման ու նրա ժողովրդի բարգավաճման համար: Այն նաև նոր էջ կբացի մեր երկրորդ համագործակցության համար, որը խարսխված է հայ ու վրաց ժողովուրդների միջև դարավոր բարեկամության ավանդույթների վրա:

## ԳՈՐԾԱԴԻՐ

### ԿԶԵՎԱՎՈՐՎԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Նոր նախագահի երդմնակալությունից հետո, երեք շաբաթվա ընթացքում, կծեակվորվի երկրի նոր կառավարությունը:

Գործող օրենսդրության համաձայն, երդմնակալությունից հետո գործող կառավարությունը իրաժարական է տալիս և դադարեցնում լիազորությունները: Դրանից հետո տեղի է ունենում նոր կառավարության ձևավորումը:

Խորհրդարանական մեծամասնությունը նախագահին ներկայացնում է նոր վարչապետի թեկնածուությունը, որից հետո նախագահը, իր հերթին, այդ թեկնածուությունը ներկայացնում է խորհրդարանի հաստատմանը:

## ԱՅՑ

### ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԸ ԲՐՅՈՒՄԵԼՈՒՄ

Հոկտեմբերի 29-ին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին հրաժեշտի այցով մեկնեց Բրյուսել:

«Սա խորհրդանշական այց է, քանի որ իմ կառավարումն ուղղված էր Եվրամիության և ՆԱՏՕ-ի մերձեցմանը»,- հայտարարեց նա:

Այցի շրջանակներում, Միխեիլ Սաակաշվիլին հանդիպում ունեցավ Եվրահանձնաժողովի նախագահ ժոզե Մանուել Բարոսոյի հետ: Վրաստանի նախագահի խոսքով, իրեն սպառնացող կառավարության (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆԸ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԴՈՉԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՆ

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահի ընտրությունների արդյունքում, ծայնեղի փոքր առավելությամբ, հաղթանակ է տարել կոմպոզիտոր Արամ Սաթյանը:



Նա ստացել է միության 43 անդամների քվե, իսկ միության նախագահի մյուս թեկնածուն` Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության (ՀԿԵՄ) երկարամյա նախագահ Ռոբերտ Ամիրխանյանը` 41 քվե: Ամիրխանյանը կոմպոզիտորների միությունը նախագահում էր 1991 թվականից:

Արամ Սաթյանը 66 տարեկան է, կոմպոզիտոր Արամ Սաթյանի որդին: Ավարտել է Երեւանի Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցը և Երեւանի Կոմիտասի անվան միության անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը: Եղել է ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության անդամ: Աշխատել է ՀԽՍՀ հեռուստառադիո պետական կոմիտեում, Երեւանի Բաբաջանյանի անվան երաժշտական ուսումնարանում, Երեւանի Կամերային նվագախմբում:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆՈՐ ՎԱՐՉԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԼԻՆԻ ԲՈԼՈՐԻ ՉԱՍԱՐ

(Սկզբը՝ 1-ին էջում)

ասաց Իվանիշվիլին:

Նրա խոսքերով, երկրի կառավարության նոր ղեկավարի թեկնածուի անունը հայտնի կդառնա նոյեմբերի 2-ին:


Բիծինա Իվանիշվիլին նշեց, որ նոյեմ-

բերի 1-ին քաղաքապետը կքննարկի իր ներկայացրած թեկնածուները, իսկ նոյեմբերի 2-ին կկայանա հանդիպում խորհրդարանական մեծամասնության հետ, որից հետո էլ հասարակությանը կներկայացվի նոր վարչապետը:

«Եկեք չբացառենք, որ խորհրդարանը

կարող է չսատարել իմ տարբերակը, սակայն դրա հավանականությունը մեծ չէ, քանի որ ես ընտրել եմ լավ թեկնածուի»,- ասաց Իվանիշվիլին:

Նա վստահեցրեց, որ Վրաստանի կառավարության նոր ղեկավարն ընդունելի կլինի բոլորի համար:



ՈՒԿՐԱԻՆԱ

ՏԻՄՈՇԵՆԿՈՅԻՆ ՆԵՐՈՒՄ ԶԻ ՇՆՈՐՉԿԻ

Դատապարտված Յուլյա Տիմոշենկոյին ներում չի շնորհվի, բայց, ամենայն հավանականությամբ, նա հնարավորություն կստանա բուժվելու մեկնել արտասահման: Այս մասին հոկտեմբերի 29-ին ասել է Ուկրաինայի խորհրդարանի խոսնակ Վլադիմիր Ռիբակը: Խոսնակը հիշեցրել է, որ Գերագույն ռադայում այժմ երեք օրինագիծ կա Տիմոշենկոյի վերաբերյալ: Նրա խոսքով, այդ օրինագիծերը խորհրդարանը կքննարկի հաջորդ շաբաթ:

Հիշեցնենք, որ Եվրամիության հետ Ուկրաինայի ասոցիացիան համաձայնագրի ստորագրման համար ԵՄ-ի գլխավոր պայմաններից մեկը Տիմոշենկոյի ազատ արձակումն է:

ԹՈՒՐԻԱ

ԲԱՅՎԵՑ ՄԻՋԱՄՅՐՅԱՍԱՔԱՅԻՆ ՆՈՐ ԹՈՒՆԵԼ

2013 թվականի հոկտեմբերի 30-ին Թուրքիան ներկայացրել է աշխարհում առաջին թունելը, որը միմյանց կապում է երկու աշխարհամասերը՝ Ստամբուլի եվրոպական ու ասիական մասերը: Marmaray նախագիծը արժեքը կազմել է մոտ 3 մլրդ եվրո: Բուֆորի մեղուցի տակով անցնող այս երկաթուղային թունելը տեղակայված է ծովի հատակից 56 մետր խորության վրա, երկարությունը 13,5 կմ է:

Տրանսպորտը Ստամբուլի համար լուրջ խնդիր է ներկայացնում: Քաղաքի 15 մլն բնակիչներից 2 մլն-ը ամեն օր երկու կամուրջներով անցնում են Բոսֆորը: Թունելը հնարավորություն կտա տեղափոխել մեկ ժամում 150.000 ուղևոր:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ

ՄՈԼԵԳՆՈՒՄ Ե «ՍՈՒՐԲ ԳՈՒՂԱ» ՓՈԹՈՐԻԿԸ

Առնվազն 13 մարդ է զոհվել Արեւմտյան Եվրոպայում մոլեգնող «Սուրբ Գուղա» փոթորիկի հետեւանքով: Մարդկանց մեծ մասը տապալված ծառերի զոհ են դարձել: Գերմանիայում զոհվել է 6 մարդ, Մեծ Բրիտանիայում՝ 4, Նիդերլանդներում, Ֆրանսիայում եւ Դանիայում՝ մեկական մարդ:

Ֆրանսիայի արեւմուտքում՝ Բրետանում, փոթորիկը մի կնոջ քշել-տարել է ծովը:

Լոնդոնի Դիթոն օդանավակայանում չեղյալ է հայտարարվել առնվազն 130 չվերթ:

Գերմանիայում օդերեւութաբանները Գյուսիսային ծովի վրա քամու ռեկորդային պոռթկումներ են արձանագրել, որոնց արագությունը հասել է ժամում 190 կիլոմետրի:

ԵԳԻՊՏՈՍ

ԶԵՐԲԱՎԱԿԵԼ Ե «ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ» ՂԵՎԱՎԱՐԸ

Եգիպտոսի անվտանգության ուժերը հոկտեմբերի 30-ին ձերբակալել են «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ղեկավարներից Ասամ ալ Արյանին: Ձերբակալությունը տեղի է ունեցել Նոր Կահիրեի շրջանում:

Ավելի վաղ, Եգիպտոսի իշխանությունները հոկտեմբերի 9-ին պաշտոնապես հայտարարել են «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության գործունեության դադարեցման ու լուծարման մասին: Կազմակերպության անդամները պայքարում են նախկին նախագահ Մուհամմադ Մուրսիին իշխանություն վերադարձնելու համար:

ՍԻՐԻԱ

ԱՍԱՂԸ ՀԱՍԱՆԵՐՈՒՄ Ե ՀԱՅՏԱՐԱՐԵԼ

Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադը հոկտեմբերի 29-ին համաձայնեց հայտարարել: Համաձայնեց վերաբերել է մինչև 2013թ. հոկտեմբերի 29-ը հանցագործություններ կատարած անձանց, նաեւ ցմահ ազատազրկված անձանց, տարեց բանտարկյալներին:

Ավելի վաղ, Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադը համաձայնեց հայտարարել էր 2013թ. ապրիլի 16-ին: Ասադի կողմից հայտարարված համաձայնեցը երկրում ստեղծված իրավիճակի կարգավորման մի մասն է կազմում:

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ



ՎԻՆՅՈՒՄՈՒՄ ԱՆՅՎԱՅՎԵԼԻՔ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ ՎՐԱՅՈՒՄ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՅԸ

Վիլնյուսի գազաթափոցվում վրացական պատվիրակությունը կգլխավորի երկրի նորընտիր նախագահ Գիրգի Սարգվելաշվիլին:

Այդ մասին հոկտեմբերի 29-ին, Թբիլիսիում անցկացված ճեպագրույցում, հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի առաջին փոխնախարար Դավիթ Զալկալիանին:

Նրա տեղեկատվության համաձայն, պատվիրակության կազմում կլինի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն:

«Պատվիրակության մնացած մասնա-

կիցների վերաբերյալ որոշում կընդունենք առաջիկայում: Աշխատանք է տարվում նաեւ մյուս այցերի ուղղությամբ: Առաջին այցը լինելու է Վիլնյուս»,- նշել է Դավիթ Զալկալիանին:

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

(Սկզբը՝ 1-ին էջում)

րության անդամները նույնիսկ նշել են այն կոնկրետ բաները, ուր նրան իբր ուղարկելու են: Սաակաշվիլին այն կարծիքին է, որ իր ձերբակալությունը Մոսկվայի հետ Վրաստանի հարաբերությունների նորմալացման պայմաններից մեկն է:

«Կարծում եմ, որ դա չի համապատասխանում մեր ժողովրդավարական եվրոպական ապագային: Դա դեմ է վրաց ժողովրդի կամքին եւ ժողովրդավարության ոգուն»,- հայտարարել է Սաակաշվիլին:

Իր հերթին, Բարոզուս նախագահությանը էլ, որ Վրաստանի կառավարությունը չպետք է ընտրողական արդարադատություն իրականացնի:

Վրաստանի կառավարությունում առայժմ չեն մեկնաբանել Սաակաշվիլու մեղադրանքները, բայց հայտարարել են, որ Բյուրեւել նրա այցը անակնկալ է դարձել իրենց համար:

Այցի շրջանակներում, Միխեիլ Սաակաշվիլին մասնակցեց Կոնրադ Ադենաու-



երի հիմնադրամի խորհրդաժողովին: Իր ելույթում նա խոսեց Վրաստանում անցկացված նախագահական ընտրությունների եւ իր կառավարման օրոք իրականացված բարեփոխումների ու ձեռք բերած հաջողությունների մասին:

ՊԱՅՈՒՍԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆԱԽԱՐԱՐԸ՝ ԿՈՐԱՍ ԵՎ ԱՆՆՊԱՏԱԿ ԾԱԽՍՎԱԾ ՄԻԼԻՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խաղոբու հավաստմամբ, եմբակառույցային նախագծերի գումարներից կորել է շուրջ 10 միլիոն լարի, եւ ոչ մի կերպ չեն կարողանում պարզել, թե ինչպես են դրանք ծախսվել:

Նրա խոսքերով, տասնյակ միլիոններ կորել են Թբիլիսիի վերակառուցման հիմնադրամից, եւ այդ հարցը ներկայումս քննության է առնվում ֆինանսների նախարարության հետաքննչական ծառայության կողմից:

Խաղոբին խոսեց նաեւ նախագահական պահուստային հիմնադրամի աննպատակ ծախսումների մասին եւ նշեց, որ պետության ղեկավարի աշխատակազմի պետից ժամանակին նամակ է ստացել, որտեղ նա խնդրում էր նախօրոք առանձնացնել չորրորդ եռամսյակի համար կատարելիք ծախսերի գումարը:

«Ֆինանսների նախարարությունից պահանջում էին չորրորդ եռամսյակում ծախսերի համար գումարը նշելով, որ նոր նախագահին այդ գումարը չի պահանջվի, իսկ մեզ այն անհրաժեշտ է: Բնականաբար, մենք մերժեցինք»,- նշեց նախարարը:

Նրա խոսքերով, նախագահական 10 միլիոնանոց հիմնադրամից մնացել է 5 հազար, եւ, ըստ երեւույթին, մնացած երեք շաբաթվա ընթացքում այդ գումարն էլ կծախսվի:

«Գումարի մեծ մասը ծախսվել է նախագահի այցերի վրա»,- հայտարարեց Խաղոբին:

Ֆինանսների նախարարի խոսքերով, վերոնշյալ ծախսերի համար նախագահը իրավական պատասխանատվության չի ենթարկվի, եւ սույն հարցը շատ ավելի նշանակալից է բարոյականության տեսանկյունից:

Թեմային անդրադարձավ նաեւ Վրաստանի տարածաշրջանների զարգացման եւ ենթակառուցվածքի նախարար Դավիթ Նարմանիան, որի հավաստմամբ, պետության գործող ղեկավար Միխեիլ Սաակաշվիլին գրեթե ամբողջովին ծախսել է Վրաստանի նախագահի պահուստային հիմնադրամի միջոցները:

«Ոչ ոք չէր կասկածում, որ նախագահը մինչեւ վերջ կծախսի իր պահուստային հիմ-



նադրամը: Նա գիտեր, որ հոկտեմբերի 27-ին իր լիազորությունների ժամկետը լրանում է, ուստի նա չափազանց շատ փող է ծախսել, հատկապես՝ նախընտրական ժամանակաշրջանում: Ըստ իմ տեղեկատվության, նա շատ մեծ վարչական ռեսուրսներ է օգտագործել: Այստեղ որեւէ այլ բան չարժեք էլ սպասել»,- հայտարարեց Նարմանիան:

Իր հերթին, Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Անդրո Բարնոն վրայտարարեց, որ տարվա սկզբից նախագահական հիմնադրամում հաշվվում էր պահանջվելիք գումարի 14 տոկոսը: «Սկզբում հիմնադրամում հաշվվում էր պահանջվելիք գումարի 18,5 տոկոսը, թեպետ կային առանձին ծախսեր, որոնց մասում ոչ մեկը չստանձնեց: Մենք լուրջ ներդրումներ իրականացրինք երկրում գինեգործության զարգացման ոլորտում»,- հայտարարեց նա:



Ծաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՎԵՐԱՑՎՈՒՄ Ե ԻՍՐԱՅԵԼԻ ՅԵՏ ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԸ

Իսրայելի հետ այցեգրային կարգը վերացվում է: Իսրայելի տարածաշրջանային խորհրդատու շրջանակներում հայտարարեց Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին:

Նրա խոսքերով, դրա վերջնական լուծման համար մնացել են տեխնիկական հարցեր: «Դուք հիշում եք, որ իմ ամենահաջող այցը Իսրայելում էր եւ, եթե հիշում եք, ես խնդրեցի վերացնել այցեգրային կարգը: Այսօր Իսրայելը դա արեց, եւ մեր հյուրերն այս ցերեկով ժամանեցին Վրաստան: Այցեգրային կարգը վերացվել է, եւ մեր քաղաքացիներն առանց այցեգրի կարող են այցելել Իսրայել», - հայտարարեց նա:

Սույն փաստն հաստատեց նաեւ Իսրայելի փոխարտգործնախարար Ջեեւ Էլկինը: Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլու հետ հանդիպումից հետո նա հայտարարեց, որ Վրաստանի ու Իսրայելի միջեւ վիզային

նեժիմը հանելու սկզբունքային որոշում է ընդունվել:

Ջեեւ Էլկինը լրագրողներին հայտնել է, որ տեխնիկական մանրամասները կքննարկվեն Վրաստանի ՆԳ նախարար Իրակլի Դարիբաշվիլու հետ:


Ավելի ուշ, Իրակլի Դարիբաշվիլին Իսրայելի հետ վիզային նեժիմը հանելու որոշումը պատմական է անվանել:

Իր հերթին, Վրաստանի արտգործնախարար Մայա Փանջիկիձեն նշեց, որ սա չի նշանակում, թե Վրաստանի քաղաքացիները կարող են վաղը եւեթ առանց վիզայի մեկնել Իսրայել: Ըստ նրա, սա նշանակում է, որ այդ ուղղությամբ բանակցություններ



րի առաջին քայլն արված է:

«Շատ շուտով ուժի մեջ կմտնի ծառայողական եւ դիվանագիտական անձնագրով անձանց համար առանց վիզայի նեժիմի վերաբերյալ համաձայնագիրը, եւ բանակցությունները կշարունակվեն՝ շարքային քաղաքացիների վրա էլ դրա ազդեցությունը տարածելու նպատակով: Սա մի քանի ամսվա գործընթաց է», - հայտարարել է Մայա Փանջիկիձեն:



ԱՋԳԱՅԻՆ ՅԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ԶՎԻԱԴ ԳԱՄԱՆՈՒՐԴԻԱՅԻՆ, ՄԵՐԱԲ ԿՈՍՏԱՎԱՅԻՆ...

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին հոկտեմբերի 27-ին, Ախմետայի շրջանի Քվեմո Ավվանի գյուղում, մասնակցեց օգոստոսյան պատերազմում զոհված Գիորգի Անցուխելիձեի հուշահամալիրը: Գերության մեջ զոհված Գիորգի Անցուխելիձեն ետմահու արժանացել էր Վրաստանի ազգային հերոսի կոչման:

Հուշահամալիրի բացման արարողությանը Միխեիլ Սաակաշվիլին հայտարարեց, որ նախագահական հրամանագրով, Վրաստանի ազգային հերոսի կոչում է շնորհվել նաեւ Վրաստանի առաջին նախագահ Ջվիադ Գամսախուրդիային, ազգային շարժման լիդեր Մերաբ Կոստավային, զենքերալ Գիորգի Սաքմիաշվիլուն (1870-1937), վրաց հոգեւորական, պատմաբան եւ աստվածաբան Գրիգոր Փերածեի (1899-1942), Վրաստանի Պատրիարք Ամբրոսի Սելիխային (1861-1927), վրաց գիտնական եւ հրապարակախոս Միխակո Շերեթելին (1878-1965) եւ ճանաչված վրաց գիտնական Էքվիմե Թաղաշվիլուն (1863-1953):

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

ՎԵՐՍԿԱՅՑ ԱՆԽԱՏԱՆՔԸ

Երկրում նախագահական ընտրությունների անցկացման կապակցությամբ հայտարարված ընդմիջումից հետո, հոկտեմբերի 30-ին Վրաստանի խորհրդարանը վերսկսեց աշխատանքը:



საქართველოს პარლამენტი

Օրենսդիր մարմնի օրակարգում ընդգրկված այլ հարցերի հետ միասին, քննարկման էին ներկայացվել սահմանադրական փոփոխություններ, ըստ որի, երկրի խորհրդարանը վերադարձվելու է Թբիլիսի: Խորհրդարանի մեծամասնությունը համաձայն է որոշման հետ, թեպետ դրա դեմ հանդես են գալիս ինչպես խորհրդարանական փոքրամասնությունը, այնպես էլ Քութայիսիում խորհրդարանի շենքի մոտ անցկացվող բողոքի ցույցի մասնակիցները:

Վրաստանի խորհրդարանի բյուրոյի նիստում պատգամավորները հավանություն տվեցին օրենսդիր մարմնի նոր լոգոյին: Ինչպես հայտարարեց խորհրդարանի փոխնախագահ Մանանա Կոբախիձեն, քանի որ խորհրդարանի հաշվեկշռի վրա միայն մի շենք է ներառված, եւ դա Թբիլիսիում գտնվող շինությունն է, ուստի, լոգոյում պատկերվում է միայն այդ կառույցը:

«Լոգոյի նոր տարբերակում պատկերված է միայն Թբիլիսիում գտնվող խորհրդարանի շենքը: Ինչ վերաբերում է Քութայիսիի շինությանը, ապա այն մեր հաշվեկշռի վրա չի գտնվում, քանի որ դրա շինարարությունը չի ավարտվել, եւ ընդունման-հանձնման արձանագրություն չի կազմվել», - ասաց նա:

ՆԱԽԱԳԱՅԻ ԱՆԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԱԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԳԼՆԱՎՈՐԵՆ ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

Ինչպես տեղեկացրել են «Վրացական երազանք» կալիցիայի կենտրոնականից, Վրաստանի նոր նախագահի աշխատակազմը կզլխավորի Լաշա Աբաշիձեն: Վերջինս Գիորգի Մարգվելաշվիլու հետ աշխատել է կրթության նախարարությունում, ապա՝ նրա ընտրական շտաբում: Ինչ վերաբերում է ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի թեկնածուությանը, ապա, նախնական տեղեկատվությամբ, այդ պաշտոնն առաջարկվել է «Վրացական երազանք» կալիցիայի լիդերներից՝ Վրաստանի խորհրդարանի ընթացակարգային հարցերի կոմիտեի նախագահ, Վրաստանի միակ կին-զենքերալ Իրինա Իմերիշվիլուն:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԸ ԿԸՆՏՐԵՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՅ

Վաղը՝ նոյեմբերի 3-ին, Վրաստանի Հանրապետական կուսակցությունը կընտրի նոր նախագահ եւ ազգային կոմիտե:

Ինչպես հայտարարեցին կուսակցությունում, պատգամավորների կողմից ընտրված ազգային կոմիտեն կընտրի նոր նախագահ, որը այդ պաշտոնում կփոխարինի Դավիթ Ուսու-

փաշվիլուն: Կուսակցության ազգային կոմիտեն եւ նախագահը կընտրվեն երկու տարի ժամկետով: Վրաստանի տարբեր շրջաններից Թբիլիսի ժամանած շուրջ 2 հազար պատգամավոր-

ները գաղտնի քվեարկությամբ կընտրեն ազգային կոմիտեի 35 անդամներին: Հիշեցնենք, որ Վրաստանի Հանրապետական կուսակցությունը հիմնվել է 1978 թվականին: Տարբեր տարիներին այն գլխավորել են Վախթանգ Չաբիբաձեն, Իվլիան Խախիդարյան, Դավիթ Բերձե-

նիշվիլին: Ներկայումս կուսակցության նախագահը խորհրդարանի ներկայիս խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլին է: Երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում կուսակցությունը ներկայացված է «Վրացական երազանք»-«Հանրապետականներ» խմբակցությամբ:

ՔՐԵԱԿԱՆ

ՆԱԽԱԳԱՅԻ ՅԵՐԹԱԿԱՆ ՆԵՐՈՒՄԸ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին իր հրամանագրով ներում շնորհեց 248 բանտարկյալի, որից 170-ը լրիվությամբ ազատվել է պատժամիջոցից:

56 բանտարկյալների պատժամակետը կիսվել է, իսկ 5-ի մեղադրանքը՝ թեթևացվել է:

Ինչպես տեղեկացրել է քրեակատարողական, պրոբացիայի եւ իրավաբանական օգնության նախարարությունը, ներման արժանացածների թվում կան հանցագործներ, որոնք դատապարտվել էին առանձնակի ծանր իրավախախտումների համար,

այդ թվում՝ բանտարկյալներից մեկը սպանության համար ցմահ բանտարկության էր արժանացել:

Նշենք, որ ներման արժանացածների թվում են արդարադատության նախկին փոխնախարարի կինը՝ Թինաթին Բուրջալիան, Բաչո Սիվախիայի տեղակալ Նիկոլո Չիմցեիշվիլին, Բուտա Ռոբաքիձեի սպանության գործով դատապարտված

Մայգեր Լիպարտելիանին, արդարադատության նախկին նախարար Ջուրաբ Ադեիշվիլու եղբայր Դավիթ Ադեիշվիլին: Նշենք նաեւ, որ Չիմցեիշվիլին եւ Ադեիշվիլին գտնվում էին փնտրտուքի մեջ:


Մեկնաբանելով Վրաստանի նախագահի ներման հրամանագիրը՝ նախագահի աշխատակազմի ղեկավար Անդրո Բառնովը հայտարարեց, որ ներման են արժանացել այն մարդիկ, ովքեր, ըստ Սաակաշվիլու, քաղաքական բռնությունների զոհ են:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը խորհրդարանին է ներկայացրել քրեական օրենսգրքի առանձին հոդվածներում կատարվելիք փոփոխությունների ծրարը:

Մասնավորապես, սառը զենք կրելու համար, ինչպես չափահաս, այնպես էլ՝ անչափահաս անձինք հետայսու կտուգանվեն 200 լարիով:

Նշենք, որ, ներկա դրությամբ, սառը զենք կրելու համար քրեական պատասխանատվության են ենթարկվում միայն առանձին վրայում եւ ենթարկվում միայն առանձին կատեգորիայի անձինք, մասնավորապես՝ դատվածություն ունեցող մինչեւ 21 տարեկան անձինք, նրանք, ովքեր վարչական պատիժ են կրում թմրանյութերի օգտագործման համար:



Ներկայացված փոփոխության համաձայն, փողոցում, բակում, ստադիոններում, պուրակներում, զբոսայգիներում, կրթական հաստատություններում, կինոթատրոններում, համերգասրահներում,

սրճարաններում, ռեստորաններում, հասարակական տրանսպորտում, ավտո եւ երկաթուղային կայարաններում, օդանավակայանում եւ հասարակական այլ վայրերում սառը զենքով հայտնվելու դեպքում, անձը ենթարկվում է կա'ն վարչական կարգի զգուշացման, կա'ն 200 լարի տուգանքի: Իրավախախտման կրկնության դեպքում, տուգանքի չափը հասնում է հազար լարիի, կամ դա փոխարինվում է 15 օրվա վարչական արգելափակմամբ:

Փոփոխությունը առնչվում է նաեւ առանց սաղավարտի մոտոցիկլետ վարողներին եւ նրանց ուղեւորներին: Առանց սաղավարտի երթնելու դեպքում, իրավախախտողները տուգանվում են 100 լարի գումարով:

Նշենք, որ մինչ այդ տուգանքը կազմում էր ընդամենը 10 լարի:

ՀԱՏՈՒԿ ԶՈԿԱՏԱՅԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ԱՐԴԱՐԱՑՐԵՑ ԲԱԶՈ ԱՆԱԼԱԻԱՅԻՆ

Թբիլիսիի քաղաքային դատարանը հատուկ ջոկատայինների գործով արդարացնող որոշում ընդունեց պաշտպանության նախկին նախարար Բաչո Ախալախայի հանդեպ:

Նշենք, որ դատախազությունը նրան մեղադրում էր յոթ հատուկ ջոկատայինների նկատմամբ քաղաքացիական հայացքների

համար անմարդկային վերաբերմունքի մեջ: Հիշեցնենք, ուր Բաչո Ախալախան երեք տարվա եւ ինն ամսվա բանտարկության

է դատապարտվել բանտային խռովության գործով:

Ինչպես հայտարարեց դատախազ Դավիթ Մեստվրիշվիլին, դատախազությունը մտադիր է բողոքարկել հատուկ ջոկատայինների գործով դատարանի ընդունած արդարացնող որոշումը:

ԴԱՏԱԽԱԶԸ ՏՈՒԳԱՆՎԵԼ Է 500 ԼԱՐԻՈՎ

Հոկտեմբերի 26-ին, Սանդրո Գիրգվիլանու սպանության հարցով Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Բաչա Ախալախայի նախնական կալանքի սահմանումից հետո, դատարանի հանդեպ ցուցաբերած անհարգալից վերաբերմունքի համար, տուգանվել է դատախազ Լեւան Բոճիաշվիլին:

Դատավարական նիստի ավարտից հետո, դատարանի ճեմասրահում լեզվակռիվ է տեղի ունեցել այդ գործով դատախազ Լեւան Բոճիաշվիլու եւ քաղաքացի Յակոբ ճվկանավայի միջեւ: Կողմերը խախտել են հաստատված կարգուկանոնը եւ բացահայտ ու կոպիտ վերաբերմունք դրսևորել դատարանի նկատմամբ: Սույն

հանգամանքը հաստատվել է ներկայացված փաստարկներով. ասված է Թբիլիսիի քաղաքային դատարանի մամլո ծառայության կողմից հոկտեմբերի 29-ին տարածած հայտարարության մեջ:

Դատարանի տվյալներով, Բոճիաշվիլին եւ ճվկանավան տուգանվել են 500-ական լարիով:



ԳՆԱԴԱՏԱԿԱՆՆԵՐ

# ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱՓԱՆՑԻԿ ԵՒՆ ԵՎ ԱՆՑԱՆ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

**Վրաստանի նախագահի ընտրությունները եղել են թափանցիկ եւ անցել են կառուցողական մթնոլորտում, եզրակացրել են եվրոպացի դիտորդները:**

«Վրաստանի նախագահի՝ հոկտեմբերի 27-ին կայացած ընտրությունները կազմակերպված էին արդյունավետ, թափանցիկ եւ անցել են բարեկամական ու կառուցողական մթնոլորտում»,- ասված է եվրոպացի դիտորդների առաքելության հոկտեմբերի 28-ին տարածված զեկույցում, որի կազմում եղել են եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱԶԿ) ժողովրդավարական ինստիտուտների ու մարդու իրավունքների բյուրոյի (ԺԻՄԻԲ), ԵԱԶԿ-ի խորհրդարանական վեհաժողովի, Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի եւ Եվրախորհրդարանի ներկայացուցիչները:  
«Ընտրությունների ընթացքում պահպանվել են

րաստման եւ անցկացման ընթացքում իբր եղած խախտումների վերաբերյալ բողոքների մեծ մասը դիտորդների կողմից մերժվել են:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Բիժինա Իվանիշվիլին հոկտեմբերի 27-ին Վրաստանում կայացած նախագահական ընտրությունները որակել է «եվրոպական» եւ շնորհակալություն հայտնել իր թիմին «Վրացական երազանք»-ին, կատարած աշխատանքի համար:

«Մենք անցկացրինք եվրոպական ընտրություններ եւ կարող ենք հպարտանալ, որ այսքան կարճ ժամանակում հասանք մեզ որակի այն ընտրությունների համեմատ, որոնք տեղի են ունեցել մեկ տարի առաջ: Ոչ ոք կասկածի տակ չի դնում, որ ընտրությունները եվրոպական էին: Այսօրից մեզ ընտրություններ Վրաստանում մինչ այժմ չէին անցկացվել»,- ասաց Բիժինա Իվանիշվիլին:

ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

# ԵՐԴՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱՆ ԶԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ ԲԻՉԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ

**Վրաստանի նախագահի երդմնակալության արարողության նախապատրաստման կառավարական հանձնաժողովը կզխավորի վարչապետ Բիժինա Իվանիշվիլին: Սահմանված կարգի համաձայն արարողությունը կանցկացվի Թբիլիսիում, Ռուսթավելու պողոտայի վրա, խորհրդարանի նախկին շենքի առջև:**

Այդ մասին կառավարության միտի ավարտից հետո հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, որը միաժամանակ նաեւ վերոնշյալ հանձնաժողովի փոխնախագահն է: Վրաստանի նորընտիր նախագահի երդմնակալության արարողությունը տեղի կունենա Թբիլիսիում, խորհրդարանի շենքի առջև: Նրա խոսքով, «Գոյություն ունեցող կանոններին համապատասխան, որոնցով մանրակրկիտ նախատեսված է երդմնակալության արարողության սցենարը, միջոցառումը պետք է կայանա Թբիլիսիում, խորհրդարանի շենքի առջև»: «Բուն արարողության մանրամասները դեռեւս չեն քննարկվել, բայց ստույգ կարելի է ասել, որ առաջիկա

երդմնակալության արարողությունը նույնքան շքեղ չի լինի, որքան բոլոր նախորդները»,- ասել է Փանջիկիձեն: Վրաստանի նորընտիր նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու երդմնակալության արարողությանը մասնակցելու հրավերներ են ուղարկվել շուրջ 70 երկրների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին: «Ընդամենը մինչեւ 70 հրավեր կուղարկվի Եվրամիության,

ՆԱՏՕ-ի երկրների, «Արեւելյան գործընկերության» հինգ երկրների, միջազգային կազմակերպությունների: Ռուսաստանի հետ մենք դիվանագիտական հարաբերություններ չունենք, հետեւաբար, նրան հրավեր չի ուղարկվի»,- նույնների 1-ին հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն: Նա հայտնեց նաեւ, որ նորընտիր նախագահի այս տարվա նույնների 17-ին կայանալիք երդմնակալության արարողությանը հրավիրյալների հարցը որոշվեց կոնսուլտացիաների ընթացքում:



ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԽԱԳԱՅԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱԳԱՅԻ ԿՐԵՆՆՈՒԹՅՈՒՆ



**Այսպիսով, հոկտեմբերի 27-ին անցկացվեցին Վրաստանի անկախ պետականության պատմության մեջ վեցերորդ նախագահական ընտրությունները, եւ երկիրն ունեցավ թվով չորրորդ նախագահը:**

Թեպետ, ինչպես արդեն հաղորդել ենք, նորընտիր նախագահի իրավասությունները զգալիորեն տարբերվում են նախորդ երեք նախագահներից: Բանն այն է, որ դեռեւս 2011 թվականին նախորդ գումարման խորհրդարանի կողմից իրականացված սահմանադրական փոփոխությունները, որոնք ուժի մեջ էին մտնելու չորրորդ նախագահի երդմնակալության օրվանից, նկատելի տեղաշարժեր են նախատեսում ինչպես իրավասությունների, այնպես էլ՝ կառավարման լիազորությունների բաշխման հարցում:

Սկսենք կարգային հարցից: Եթե սահմանադրության նախորդ խմբագրությունը այդ հարցում նախագահին վերապահում էր անսահմանափակ իրավասություններ, սկսած նախագահների, կառավարման մարմնի ներկայացուցիչների, տարբեր մակարդակների եւ նշանակման հանձնաժողովների անդամների, գլխավոր շտաբի պետի ու զորատեսակների հրամանատարների եւ շատ ուրիշների նշանակումը, ապա նոր սահմանադրությամբ նախագահի տնօրինության տակ մնում է միայն Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի եւ իր սեփական աշխատակազմի ղեկավարի նշանակման իրավասությունը:

Ինչպես նշվեց, նոյեմբերի 17-ից՝ նոր նախագահի երդմնակալման օրվանից, նախագահի՝ սահմանադրությամբ սահմանված իրավասությունները զգալիորեն սահմանափակվում են: Եթե այսօր դեռեւս գործող սահմանադրությամբ նախագահը սահմանում է իրականացնում է երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը, ապա հիմնվում է երկրի միասնությունն ու ամբողջականությունը, սահմանադրության համապատասխան, պետական մարմինների գործունեությունը, միաժամանակ, արտաքին հարաբերություններում Վրաստանի գերագույն

խավոր հրամանատարի պաշտոնը: Երկրի վրա զինված հարձակման դեպքում, նա է հայտարարում պատերազմական վիճակը, համապատասխան պայմանների առկայության դեպքում, կնքում հրադադար, թեպետ կնքած համաձայնագիրը առնվազն 48 ժամվա ընթացքում ենթակա է խորհրդարանի կողմից հաստատման:

Նաեւ, ինչպես պատերազմի, այնպես էլ՝ զանգվածային իրարացումների, երկրի տարածքային ամբողջականության վտանգման, ռազմական հեղաշրջման եւ զինված խռովության, էկոլոգիական աղետի եւ համաճարակների կամ այլ իրադարձությունների ժամանակ, երբ պետական մարմիններն ի վիճակի չեն լինում նորմալ իրականացնել սահմանադրությամբ իրենց վերապահված գործառնությունները, նախագահն իրավասու է հայտարարել երկրի ողջ տարածքում կամ դրա որոշակի հատվածում արտակարգ դրություն, ընդ որում՝ այդ որոշումն էլ առնվազն 48 ժամվա ընթացքում հաստատման համար պետք է ներկայացվի խորհրդարանին: Նման իրավիճակներում, նախագահն արձակում է հրամանագրեր, որոնք օրենքի ուժ ունեն եւ գործում են մինչեւ արտակարգ դրության վերացումը: Այդ հրամանագրերը եւս ներկայացվելու են խորհրդարանին:

Տվյալ պարագայում հատկաշուկան է մի հանգամանք: Իրեն վերապահելով գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնը՝ նախագահը լրիվությամբ զրկվում է գլխավոր շտաբի ձեւավորման իրավունքից: Նա, առանց կառավարության, այսինքն՝ առանց վարչապետի համաձայնության, կարող է ներկայացնել իրադարձություններ, իրավունք չունի նշանակել գլխավոր շտաբի պետին ու զորատեսակների հրամանատարներին:

Ինչպես նշեցինք, նախագահը զրկվում է նախնազգայնորեն նշանակելու իրավունքից, իսկ ինչ վերաբերում է ԿԵԴ-ի եւ կարգավորման հանձնաժողովների անդամների թեկնածություններին, ապա նախագահը, առանց կառավարության համաձայնության, հաստատման համար չի կարող ներկայացնել խորհրդարանին: Դեռեւս գործող սահմանադրությամբ, նախագահն է նշանակում խորհրդարանական եւ տեղական ներկայացուցչական մարմինների ընտրությունները, իրավասու է կանգնեցնել կամ անվավեր ճանաչել կառավարության եւ գործադիր իշխանության

հաստատությունների ակտերը, միջազգային համաձայնագրերն ու պայմանագրերը, օրենքները, եթե դրանք հակասում են սահմանադրությանը: Միաժամանակ, նախագահը իրավասու էր դիմել բնակչությանն ու խորհրդարանին: Տարեկան մեկ անգամ նա խորհրդարանին էր ներկայացնում երկրի համար նշանակալի հարցերի վերաբերյալ հաշվետվությունը, արձակում էր հրամանագրեր ու կարգադրություններ, ստորագրում էր օրենքներ, լուծում ապաստարանի տրման, քաղաքացիության եւ պատվավոր կոչումների, պետական պարգևների, զինվորական եւ դիվանագիտական կոչումների շնորհման, դատապարտյալների ներման հետ կապված հարցերը:

Վերոնշյալ իրավասությունները նոր սահմանադրությամբ գրեթե լրիվությամբ պահպանվել են, միայն թե նախագահը հետայսու զրկվում է կառավարության կողմից ընդունված որոշումներն անվավեր ճանաչելու իրավունքից: Ավելին, նոր սահմանադրության հատուկ հոդվածով նախագահի կողմից ընդունված նշանակալի ակտերը ուժի մեջ են մտնում միայն վարչապետի կոնսուլտացիայից հետո (համաձայնության) դեպքում: Թեպետ այս հարցում որոշակի հակասություն է բովանդակվում: Բանն այն է, որ վարչապետի կոնսուլտացիայից հետո ոչ բոլոր հարցերում է պարտադիր (օրինակ, պարգևատրումների, պատվավոր կոչումների շնորհման եւ այլն), նման դեպքում, բավական է դրանք ուղղակի համաձայնեցնել վարչապետի հետ:

Հատկաշուկան է, որ նոր սահմանադրությամբ երկրի նախագահին է վերապահվում հանրաքվեի ու հասարակական հարցման (պլեբիսցիտի) անցկացման իրավունքը, ինչը նշանակալի լծակ է նախագահի ձեռքում: Սակայն, տվյալ դեպքում, այդ իրավասության նշանակությունը նվազեցնում է ներկայիս գործող սահմանադրությամբ այն կետը, ըստ որի, մինչեւ երկրի տարածքային ամբողջականության վերականգնումը հանրաքվեի անցկացումն անթույլատրելի է: Իսկ ինչ վերաբերում է պլեբիսցիտին, ապա դրա որոշումների կատարումը պարտադիր չէ, եւ կառավարությունը, բոլոր դեպքերում ի վիճակի է այն օգտագործել իր հայեցողությամբ: